

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

**«ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝
ԱՅՆՔԱՆՈՎ, ՈՐՔԱՆՈՎ ՉԵՆ ՆԱԽԱՏԵՍՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՉՅԵՌԱՆԱԼՈՒ
ՄԱՍԻՆ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԻ՝ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՌԱՐԿԱ ԼԻՆԵԼԸ,
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»
ԳՈՐԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Դիմող կողմի պահանջը և վկայակոչած իրավական հիմքերը

Դիմող Հայկ Մամիջանյանը, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածով, դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ այնքանով, որքանով չեն նախատեսում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա լինելը:

Դիմողը գտնում է, որ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումը հանգեցնում է վերջիններիս ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման, իսկ խափանման միջոցի կիրառումից անմիջապես հետո դրանից բխող՝ վարույթն իրականացնող մարմինների պարտադիր կատարման ենթակա գործողությունների արդյունքում գործնականում սահմանափակվում է նաև այդ իրավունքի իրականացման փաստացի հնարավորությունը:

Դիմողի կարծիքով՝ անձը, որի նկատմամբ կիրառվել է որպես խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին, իրավունք ունի դիմելու դատարան՝ խնդրելով պարզել այդ խափանման միջոցի կիրառման իրավաչափությունը, իսկ դատարանի պարտականությունն է քննել համապատասխան բողոքը և այն հիմնավոր համարելու դեպքում որոշում կայացնել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին:

Դիմողը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի՝ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԿԴ2/0009/11/19 գործով կայացրած որոշմամբ արձանագրված իրավական դիրքորոշումները, նշում է, որ իրավակիրառ պրակտիկայում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը չի դիտարկվում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա՝ ելնելով այն հանգամանքից, որ այդ խափանման միջոցի կիրառմամբ ինքնին չի սահմանափակվում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը:

Մինչդեռ, ըստ Դիմողի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ այնքանով, որքանով ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա է դիտարկվում միայն այն պարագայում, երբ մեղադրյալն ունի իրական շահագրգռվածություն լքելու իր մշտական բնակության վայրը կամ իրականում ձգտում է հեռանալ, սակայն վարույթն իրականացնող մարմնից չի ստանում թույլտվություն, հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 80-րդ հոդվածներին, 81-րդ հոդվածի 1-ին մասին:

Պաշտպանի դիրքորոշումը կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի՝ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկա լինելու վերաբերյալ¹

Սույն դիրքորոշման շրջանակներում Պաշտպանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցերին՝

1. արդյո՞ք կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումը գործնականում հանգեցնում է անձի ազատ տեղաշարժման և այլ հիմնական իրավունքների սահմանափակման,

¹Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումներ կայացված է՝ 1998 թվականի հունիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներն ու տրամաբանությունը նկատի ունենալով:

2. արդյո՞ք ստորագրությունն չհեռանալու մասին խափանման միջոցը պետք է հանդիսանա մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկա:

1. **ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի** համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:
(...)

4. Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ»:

ՀՀ Սահմանադրական դատարանը, 2017 թվականի ապրիլի 4-ի թիվ ՍԴՌ-1360 որոշման շրջանակներում անդրադառնալով ազատ տեղաշարժման իրավունքին, արձանագրել է, որ **ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված այս իրավունքը ենթադրում է թե՛ ՀՀ տարածքում ազատորեն տեղաշարժվելու, թե՛ ՀՀ տարածքից դուրս գալու՝ անձի հայեցողության և այն ազատորեն իրացնելու հնարավորությունը:** Այս իրավունքը, թերևս, բացարձակ չէ, այն կարող է սահմանափակվել Սահմանադրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում՝ Սահմանադրությամբ նախատեսված պահանջների պահպանմամբ:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրել է իրավական այն չափանիշները, որոնց գնահատմամբ կարելի է պարզել Հայաստանի Հանրապետությունում անձի տեղաշարժվելու իրավունքի՝ քննարկման առարկա հանդիսացող սահմանափակման միջամտության աստիճանը: *Մասնավորապես, դրանք են.*

1) *ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանում է մարդու և քաղաքացու տեղաշարժվելու ազատության ծավալները և սահմանները, ինչն արգելում է պետության ոչ իրավաչափ միջամտությունը,*

2) այդ իրավունքը բացարձակ չէ, և այն կարող է սահմանափակվել օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում և սահմանված նպատակների պահպանմամբ,

3) ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը պետք է սահմանված լինի օրենքով,

4) այդ իրավունքի ողջամիտ և համաչափ օրենսդրական կարգավորումը ենթադրում է հանրային և մասնավոր շահերի արդարացի հարաբերակցության ապահովում՝ առանց նվազեցնելու և ոչ իրավաչափ սահմանափակելու մարդու և քաղաքացու անհատական ազատության ծավալները և սահմանները,

5) ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ,

6) այդ իրավունքի սահմանափակման ծավալները և սահմանները պետք է համաչափ լինեն հետապնդվող նպատակին²:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 4 արձանագրության՝ «Տեղաշարժի ազատությունը» վերտառությամբ 2-րդ հոդվածի համաձայն՝ «1. Որևէ պետության տարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկրից, ներառյալ իր սեփական երկիրը, հեռանալու իրավունք:

3. Այդ իրավունքների իրականացման նկատմամբ չպետք է կիրառվի որևէ սահմանափակում, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

²Տե՛ս ԵՅԵՍ սահմանադրական դատարանի՝ 2017թ վ ա կ ա ն ի ա պր ի լ ի 4-ի թ ի վ ՍԴՈ-1360 որոշումը

4. 1-ին կետում շարադրված իրավունքները ևս կարող են որոշ ոլորտներում ենթարկվել սահմանափակումների, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և արդարացվում են ժողովրդավարական հասարակության հասարակական շահերով»:

Հաշվի առնելով հիշատակված կոնվենցիայի պահանջները՝ **Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան)** արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «անձի տեղաշարժման ազատությունը սահմանափակող ցանկացած միջոց պետք է լինի օրինական, հետապնդի իրավաչափ նպատակ և արդար հավասարակշռությունն ապահովի հանրային շահի և անձի մասնավոր իրավունքի միջև³»:

Մեկ այլ որոշմամբ Եվրոպական դատարանն արձանագրել է. «անհրաժեշտ չէ քննարկել՝ արդյոք չհեռանալու պարտավորությունը, գրավից զատ խափանման միջոց էր, թե ոչ: Բավական է նշել, որ մինչև դատավարությունը, դիմումատուները, յուրաքանչյուր անգամ, երբ ցանկանում էին այլ տեղանք մեկնել, պարտավոր էին իրենց մշտական բնակության վայրը լքելու թույլտվություն հայցելն առաջին ատյանի դատարանից: Հետևաբար, Դատարանը համաձայն է դիմումատուների հետ, որ վիճարկվող միջոցը սահմանափակել է նրանց ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ Կոնվենցիայի թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված իրավունքին միջամտելով⁴»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Խափանման միջոցներն են՝

1) կալանավորումը.

2) գրավը.

3) ստորագրություն՝ չհեռանալու մասին.

4) անձնական երաշխավորությունը.

5) կազմակերպության երաշխավորությունը.

6) հսկողության հանձնելը.

7) հրամանատարության հսկողության հանձնելը:

³ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բառլամանը ընդդեմ Ֆրանսիայի գործով 22 մայիսի 2001թ. վճիռը,

⁴ Տե՛ս Եվրոպական դատարանի Անտոնենկով և այլք ընդդեմ Ուկրաինայի գործով 2005թ. նոյեմբերի 22-ի վճիռը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝*

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցությունն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Չհեռանալու մասին ստորագրությունն տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը: Նա պարտավոր է ներկայանալ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին»:*

ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» թիվ 884-Ն որոշման հավելված 1-ի 5-րդ կետի թ եթակետի համաձայն՝ *սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՄԷԿՏ) համակարգի շահագործման համար անհրաժեշտ տվյալների տրամադրման աղբյուրները ներառում են իրավասու մարմնի կողմից «ստորագրությունն չհեռանալու մասին», «գրավ», «անձնական երաշխավորություն» կամ «կազմակերպության երաշխավորություն» խափանման միջոցը կիրառելու մասին տվյալները՝ խափանման միջոց կիրառելուց հետո՝ անհապաղ:*

Նույն որոշման հավելված 1-ի 1-ին կետի համաձայն՝ ՍԷԿՏ համակարգի խնդիրը Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների կողմից Հայաստանի Հանրապետություն մուտք (ելք) գործող անձանց և տրանսպորտային միջոցների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի ձևավորումն է, տեղեկատվության ստացման, կուտակման և մշակման ապահովումն է, ինչպես նաև համապատասխան շահագրգիռ մարմիններին անհրաժեշտ տվյալների տրամադրումն է:

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» 1998թ. դեկտեմբերի 25-ի թիվ 821-Ն որոշման 1-ին հավելվածի 19-րդ կետի համաձայն՝ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է նախաքննության մարմինը: (...) Մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես:

ՀՀ Սահմանադրական դատարանը վերը նշված որոշմամբ արձանագրել է, որ անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի կիրառման դեպքում:

ՀՀ վճռաբեկ դատարանը, Լուսինե Կարապետյանի վերաբերյալ 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԿԴ2/0009/11/19 գործով կայացրած որոշմամբ անդրադառնալով «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառմամբ անձի տեղաշարժվելու իրավունքի սահմանափակմանը, արձանագրել է հետևյալը.

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով օրենսդրի կողմից սահմանված խափանման միջոցների համակարգում՝ չհեռանալու մասին ստորագրությունն ունի անձի իրավունքների նկատմամբ նվազ միջամտություն: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ չհեռանալու մասին ստորագրությունն ըստ էության արտահայտում է գրավոր եղանակով ամրագրված անձի «խոստումն» առ այն, որ նա պարտավորվում է իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամանակահատվածում գտնվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ: Այն հոգեբանական

հարկադրանքի միջոց է, որը գրավոր եղանակով տրված՝ չբացակայելու «խոստման» ուժով կաշկանդում է մեղադրյալին մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը՝ առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության: Ուստի, ի տարբերություն ֆիզիկական հարկադրանքի միջոցների, օրինակ՝ անձի ազատության իրավունքը սահմանափակող՝ կալանավորում խափանման միջոցի, չհեռանալու մասին ստորագրությունը, որպես խափանման միջոց, ինքնին չի հանգեցնում անձի հիմնարար իրավունքի խախտման»:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման արդյունքում անձի հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ Պաշտպանի եզրահանգումները հանգում են հետևյալին.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածը նախատեսում է կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառման ենթակա խափանման միջոցները, մասնավորապես սահմանելով, որ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ՝ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու և դատավճռի կատարումն ապահովելու նպատակով: Այլ կերպ՝ խափանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնց կիրառմամբ սահմանափակվում են մեղադրյալի կամ կասկածյալի որոշ հիմնական իրավունքներ, երբ վարույթ իրականացնող մարմնի մոտ առկա է ողջամիտ ենթադրություն, որ խափանման միջոց չկիրառելիս անձը կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել վարույթի իրականացմանը: Այսպես, «կալանավորում» խափանման միջոցի կիրառմամբ սահմանափակվում է անձի անձնական ազատության իրավունքը, «գրավի» պարագայում՝ սեփականության իրավունքը և այլն: Հաշվի առնելով խափանման միջոցների կիրառմամբ անձի հիմնական իրավունքների սահմանափակումը՝ *դրանք կարող են նաև չկիրառվել մեղադրյալի կամ կասկածյալի նկատմամբ:* Յուրաքանչյուր դեպքում խափանման միջոցի կիրառման վերաբերյալ որոշում կայացնելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է պատշաճ գնահատականի արժանացնի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված խափանման միջոց կիրառելու հիմքերը և նպատակը: Մասնավորապես, խափանման միջոցները կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի

նկատմամբ քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պատշաճ վարքագիծը կանխելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածով նախատեսված «չհեռանալու մասին ստորագրություն» տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը: Այս խափանման միջոցը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խափանման միջոցների համակարգում ունի անձի իրավունքների նկատմամբ նվազ միջամտություն: Այնուամենայնիվ, խափանման միջոցի օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված խափանման միջոց կիրառելու հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի վերաբերյալ ողջամիտ հետևությունների առկայությունը: Խափանման միջոց կիրառելու հիմքերն օրենքով նախատեսված այն հանգամանքներն են, որոնք հաստատվում են ապացույցների որոշակի ամբողջությամբ և հնարավորություն են տալիս հիմնավորված ենթադրություններ անել այն մասին, որ անձի նկատմամբ այս կամ այն խափանման միջոց չկիրառելիս անձը կարող է դրսևորել ոչ պատշաճ վարքագիծ և խոչընդոտել քրեական դատավարության խնդիրների իրականացմանը:

Անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոց կիրառելու պարագայում համապատասխան տվյալները մուտքագրվում են ՍԷԿՏ համակարգ ՀՀ կառավարության թիվ 884-Ն որոշմամբ նախատեսված կարգով:

Ավելին՝ մեղադրյալի նկատմամբ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման արդյունքում նախաքննության մարմինը իրավասու է ժամանակավորապես վերցնել նաև մեղադրյալի անձնագիրը: Անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և ենթակա է վերադարձման խափանման միջոցի վերացման պահին:

Վերոշարադրյալ իրավանորմերը, Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը թույլ են տալիս «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառմամբ անձի

ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման վերաբերյալ կատարել հետևյալ եզրահանգումները.

«Չհեռանալու մասին ստորագրություն» խափանման միջոցի՝ որպես դատավարական հարկադրանքի միջոցի կիրառման արդյունքում անձը զրկվում է ՀՀ տարածքից դուրս գալու իր հայեցողության և այն ազատորեն իրացնելու հնարավորությունից, ինչի արդյունքում սահմանափակվում է վերջինիս ազատ տեղաշարժման իրավունքը: Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի կիրառմամբ՝ առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության այլ տեղանք մեկնելու արգելքն, իր մշտական բնակության վայրից չհեռանալու պահանջն անձի ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակում է դիտարկում նաև Եվրոպական դատարանը:

«Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը կիրառելու մասին տվյալները ՍԷԿՏ համակարգ մուտքագրվելու արդյունքում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի հնարավոր սահմանափակումների մասին են վկայում նաև Պաշտպանի կողմից գործնականում արձանագրված խնդիրները: Այսպես, օրինակ՝ *«արձանագրվել են դեպքեր, որ խափանման միջոցի վերացման դեպքում համապատասխան գրառում ՍԷԿՏ համակարգում չի արվել, և երբ անձը ցանկացել է հատել ՀՀ պետական սահմանը, տեղեկացվել է, որ իր նկատմամբ դեռևս առկա է արգելք: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են դեպքեր, երբ չնայած անձինք կրած են եղել դատարանի կողմից նշանակված պատիժը, սակայն վերջիններիս՝ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը ՍԷԿՏ համակարգից չէր հանվել՝ դեռևս նախաքննության փուլում կիրառված միջոցի հիման վրա: Ստացվել են ահազանգներ նաև այն մասին, որ քրեական գործով վարույթը կարճվել է և քննիչը որոշում է կայացրել քրեական հետապնդումը դադարեցնելու և ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին: Համապատասխան գրություններ են ուղարկվել Ոստիկանություն, սակայն ՍԷԿՏ համակարգում դեռ առկա են եղել տվյալներ, արդյունքում՝ անձանց ելքը Հայաստանից չի թույլատրվել⁵»:*

⁵ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021թ. տարեկան հաղորդում, էջ 567

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը մեկնաբանել է «չհեռանալու մասին ստորագրություն» խափանման միջոցի՝ քրեական արդարադատության համակարգում դերն ու իրավական նշանակությունը՝ արձանագրելով հետևյալը. *«չհեռանալու մասին ստորագրությունն ըստ էության արտահայտում է գրավոր եղանակով ամրագրված անձի «խոստումն» առ այն, որ նա պարտավորվում է իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման ժամանակահատվածում գտնվել վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ: Այն հոգեբանական հարկադրանքի միջոց է, որը գրավոր եղանակով տրված՝ չբացակայելու «խոստման» ուժով կաշկանդում է մեղադրյալին մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը՝ առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության⁶»:*

Չարկ է նկատել, որ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառմամբ համապատասխան տվյալներն անհապաղ մուտքագրվում են ՍԷԿՏ համակարգում, իսկ մեղադրյալի անձնագիրը վերցվում է նախաքննության մարմնի կողմից: Վերոգրյալից հետևում է, որ գործնականում սահմանափակվում է անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի բաղադրատարր հանդիսացող Հայաստանի Հանրապետությունից մեկնելու իրավունքի իրականացման փաստացի հնարավորությունը: Այլ կերպ՝ անձը ոչ միայն հոգեբանական ներգործության միջոցով կաշկանդվում է և չբացակայելու «խոստման» ուժով առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չի մեկնում այլ պետություն, այլև ուղղակիորեն սահմանափակվում է նրա այդ հնարավորությունը ՀՀ պետական սահմանը հատելու մտադրության առկայության դեպքում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձնագրի բացակայության կամ ՍԷԿՏ համակարգում վերջինիս վերաբերյալ տվյալների մուտքագրված լինելու պարագայում վերջինիս ելքը կարգելվի սահմանային վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ ՀՀ կառավարության 821-Ն որոշմամբ նախատեսված նախաքննության մարմնի կողմից մեղադրյալի անձնագիրը վերցնելը *սահմանափակում է նաև անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը:*

⁶Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2022թ վ ա կ ան ի դ ե կ տ ե մ բ եր ի 27-ի թ ի վ Կ Դ 2/0009/11/19 գ ո թ ծ ո վ ո թ ո շ մ ան 17-ր դ կ ե տ ը

Վիճարկվող առարկայի համատեքստում անձի մասնավոր և ընտանեկան կյանքի պաշտպանության հիմնահարցի վերաբերյալ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ «անձը հաստատող փաստաթուղթը վերցնելն անձի մասնավոր կյանքին շարունակական միջամտությունն է այն բանի հաշվառմամբ, որ այդ փաստաթուղթը քաղաքացիների կողմից օգտագործվում է առօրյայում, ինչպես նաև այնպիսի կարևոր կարիքների բավարարման համար, ինչպիսիք են՝ աշխատանք գտնելը կամ բժշկական օգնություն ստանալը⁷»:

Միաժամանակ, նույն առարկայի շրջանակում, Եվրոպական դատարանը մեկ այլ գործով վերահաստատել է, որ «օրենքին համապատասխան» եզրույթն առաջին հերթին պահանջում է, որ ձեռնարկված միջոցը ներպետական օրենսդրական հիմք ունենա, իսկ կառավարությունը որևէ փաստ չի ներկայացրել, որ դիմողի անձնագրի չվերադարձնելը ներպետական օրենսդրությունում որևէ հիմք է ունեցել, հետևապես առկա է կոնվենցիոն իրավունքի խախտում⁸:

Ընդ որում՝ Սահմանադրական դատարանն անդրադառնալով նախաքննության մարմնի կողմից մեղադրյալի անձնագիրը վերցնելու իրավակիրառ պրակտիկային՝ արձանագրել է հետևյալը.

«ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի 4-րդ մասի տրամաբանությանը համապատասխան նման սահմանափակումը կոչված է կանխելու կամ բացահայտելու հանցագործությունները, պաշտպանելու այլոց և, մասնավորապես, տվյալ քրեական գործով տուժողների իրավունքները և ազատությունները: Հետևաբար՝ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշման շրջանակներում իրավաչափ է դառնում նաև այդպիսի կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելը: Այս դեպքում անձնագիրը վերցնելը խափանման միջոցի արդյունավետ իրացման երաշխիք է:

Սակայն նույնը չի կարելի ասել այն դեպքի համար, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից, առանց խափանման միջոցի (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառման, վերցվում է կասկածյալի կամ մեղադրյալի

⁷ Տե՛ս Եվրոպական դատարանի որոշումը Սմիրնովան ընդդեմ Ռուսաստանի գործով 2003թ. հունիսի 24-ի վճիռ (գանգատ թիվ 46133/99, կետ 97

⁸ Տե՛ս Եվրոպական դատարանի նույն որոշման կետեր 99 և 100):

անձնագիրը: Հաշվի առնելով խափանման միջոց կիրառելու և դրա համատեքստում անձի անձնագիրը վերցնելու նպատակը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերը նշված դեպքում բացակայում է նաև կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, նրանց կողմից դատավճռի կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ ողջամիտ կասկածը: Հետևաբար՝ բացակայում է նաև հանցագործությունները կանխելու կամ բացահայտելու, այլոց և, մասնավորապես, տվյալ քրեական գործով տուժողների իրավունքները և ազատությունները պաշտպանելու նպատակով անձնագիրը վերցնելու միջոցով կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը»:

Վերոշարադրյալ իրավական դիրքորոշումից բխում է, որ վիճարկվող նորմի իրավաչափությունը ՀՀ Սահմանադրական դատարանը դիտարկել է երկու տեսանկյունից, առաջին՝ երբ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ առկա է խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշում, երկրորդ՝ երբ կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ առկա չէ խափանման միջոց (ստորագրություն չհեռանալու մասին կամ կալանք) կիրառելու մասին որոշում: Առաջին դեպքի առնչությամբ իրավաչափ է համարվել մեղադրյալի անձնագիրը վերցնելը՝ հաշվի առնելով սահմանափակման նպատակը, իսկ մյուս դեպքում Սահմանադրական դատարանը նշել է անձնագիրը վերցնելու միջոցով կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների սահմանափակման անհրաժեշտության բացակայության մասին: Այնուամենայնիվ, երկու դեպքում էլ Սահմանադրական դատարանն արձանագրել է անձի իրավունքների սահմանափակման փաստը՝ մի դեպքում համարելով իրավաչափ, իսկ մյուս դեպքում՝ ոչ իրավաչափ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ, սահմանափակվում են անձի մի շարք հիմնարար իրավունքներ: Մասնավորապես, սահմանափակվում է անձի՝ այլ տեղանք մեկնելու, բնակության վայրը փոխելու իրավունքը, իսկ տվյալ խափանման միջոցի կիրառման արդյունքում դրանից անմիջապես բխող՝ վարույթն իրականացնող մարմինների կողմից պարտադիր անհապաղ կատարման ենթակա գործողությունների արդյունքում, այն է՝ համապատասխան տվյալների ՍԷԿՏ համակարգում անհապաղ մուտքագրմամբ և նախաքննության մարմնի կողմից անձնագիրը վերցնելով, անձին ուղղակիորեն չի

թուլլատրվում հատել ՅՅ պետական սահմանը և մեկնել արտերկիր, ինչը հանգեցնում է վերջինիս՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման: Միաժամանակ, նախաքննության մարմնի կողմից մեղադրյալի անձնագիրը վերցնելով՝ սահմանափակվում է նաև անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

2. Արդյո՞ք ստորագրությունն չհեռանալու մասին խափանման միջոցը պետք է հանդիսանա մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության առարկա:

ՅՅ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:*

ՅՅ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և որդամիտ ժամկետում քննության իրավունք:*

ՅՅ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝

1. *Չետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: (...)*

ՅՅ սահմանադրական դատարանն իր 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ ՍԴՌ-1571 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանության տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքը բնութագրվում է որպես անձի հիմնական անօտարելի իրավունքներից մեկը և միաժամանակ որպես այլ

իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք: Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգի մասին **ՀՀ սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-844 որոշմամբ** նշել է. «Յետաքննության, նախաքննության մարմինների, պաշտոնատար անձանց, դատախազի որոշումները և գործողությունները դատարան բողոքարկելու՝ անձանց (քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց) իրավունքը կարող է իրացվել հետևյալ նախապայմանների դեպքում.

- եթե խախտվել են այդ անձանց իրավունքները և օրինական շահերը,
- եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից⁹ (...):»:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հարցին **Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ներսես Միսակյանի գործով** կայացված որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,
- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև

⁹Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ վ ա կ ա ն դ ե կ տե մ բ եր ի 7-ի թիվ ՍԴՈ-844 որոշումը, 8-րդ կետ

վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները: Մինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների դեմ իրավասու անձի կողմից բողոք բերելու դեպքում (եթե այդ որոշումները կամ գործողությունները ենթակա են դատական բողոքարկման) դատարանը պարտավոր է ստուգել բողոքարկված որոշումների կամ գործողությունների օրինականությունն ու հիմնավորվածությունը, պարզել, թե արդյոք առկա է անձի իրավունքների և ազատությունների խախտում, արդյունքում՝ կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում՝ թույլ տրված օրինախախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) պարտականությունը սահմանելու կամ բողոքը մերժելու մասին:

(...) մինչդատական վարույթի ընթացքում քրեադատավարական օրենսգրքով նախատեսված որոշումները և գործողությունները, որոնք կարող են խախտել դատավարության մասնակիցների իրավունքներն ու ազատությունները կամ խոչընդոտել արդարադատության մատչելիությանը, կարող են բողոքարկվել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան¹⁰»:

Անդրադառնալով դատական վերահսկողության սահմաններին՝ **Վճռաբեկ դատարանը Վարուժան Մանուկյանի գործով որոշման** մեջ նշել է, որ «(...) մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոքարկման ենթակա են նախնական քննության մարմինների այն որոշումները և գործողությունները (անգործությունը), որոնք խախտում են անձի իրավունքներն ու օրինական շահեր (...)¹¹»:

Անդրադառնալով ազատ տեղաշարժվելու իրավունքը սահմանափակող միջամտության՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա լինելուն՝ **Եվրոպական դատարանն** արձանագրել է, որ *թիվ 4 Արձանագրության 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ իշխանությունները պարտավոր են ապահովել, որ անհատի՝ իր երկիրը լքելու իրավունքի ցանկացած*

¹⁰ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ներսես Միսակյանի գործով 2009 թվականի ապրիլի 10-ի թիվ ԱԲԴ1/0003/11/08 որոշման 12-րդ կետը

¹¹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Վարուժան Մանուկյանի գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի նկայացված թիվ ԵԿԴ/0060/11/10 որոշման 16-րդ կետը :

սահմանափակում ի սկզբանե և դրա ողջ ընթացքում լինի հիմնավորված և համաչափ: Այդ գնահատականը սովորաբար պետք է ենթակա լինի վերանայման դատարանների կողմից, քանի որ նրանք լավագույն երաշխիքն են, որ դատավարությունը կլինի անկախ, անաչառ և օրինական: Նրանց վերանայման շրջանակը պետք է հնարավորություն ընձեռի հաշվի առնել ներգրավված բոլոր գործոնները¹²:

Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման դատական վերանայման շրջանակը պետք է ընդգրկի կիրառված միջոցի օրինականության և համաչափության ստուգումը: Ավելին, իշխանությունները չպետք է երկարաձգեն ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակումը առանց պարբերական վերանայման¹³:

Վճռաբեկ դատարանն անդրադառնալով «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի մինչդատական վարույթի դատական վերահսկողության առարկա լինելու հարցին՝ արձանագրել է հետևյալը. «մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը գործադրվում է անձի առերևույթ խախտված իրավունքների առկայության դեպքում՝ խախտումը վերացնելու նպատակով, իսկ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը կամ անձի՝ չհեռանալու մասին «խոստումը» ինքնին չի վկայում այդպիսի խախտման առերևույթ առկայության մասին, այն չի կարող դառնալ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա: Այլ կերպ, քրեական վարույթի ընթացքում չհեռանալու մասին ստորագրություն տված անձը չի կարող պարզապես բողոք ներկայացնել դատարան՝ պահանջելով վերացական վերահսկողության ենթարկել իր կողմից տրված ստորագրության ուժով կիրառված խափանման միջոցի իրավաչափությունը: Վերացական վերահսկողության պարագայում բացակայում են դրա կիրառման իրավաչափությունը ստուգման ենթարկելու ելակետային տվյալները, որպիսի պայմաններում անհնար է դառնում գործադրել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը¹⁴»:

¹² Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Bulea v. Romania գործով 2013 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 27804/10, կետ 59:

¹³ Տե՛ս Եվրոպական դատարանի՝ Rotaru v. the Republic of Moldova, 2020, §§ 25 and 33; Sissanis v. Romania, 2007, § 70; Rien v. Bulgaria, 2006, §§ 124 and 126; Gochev v. Bulgaria, 2009, § 50

¹⁴ Տե՛ս ՅՅ վճռաբեկ դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԿԴ-2/0009/11/19 գործով որոշման 17-րդ կետը

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ հետագա դատական վերահսկողությունը քրեական դատավարության համակարգում անձի հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է: Այն քրեադատավարական միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալու անձի իրավունքների և ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնելու խախտված իրավունքներն ու ազատությունները: Այլ կերպ՝ հետագա դատական վերահսկողության անմիջական խնդիրներից է մինչդատական վարույթում նախաքննության մարմինների որոշումների և գործողությունների (անգործության) հետևանքով անձի իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման բացառումն ու խախտված իրավունքների վերականգնումը:

Վերը շարադրված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառմամբ սահմանափակվում են անձի մի շարք հիմնական իրավունքներ և ազատություններ: Մասնավորապես, տվյալ խափանման միջոցի կիրառմամբ և դրանից անմիջապես բխող՝ վարույթն իրականացնող մարմինների կողմից պարտադիր անհապաղ կատարման ենթակա գործողությունների արդյունքում, այն է՝ համապատասխան տվյալների ՍԵԿՏ համակարգում անհապաղ մուտքագրմամբ և նախաքննության մարմնի կողմից անձնագիրը վերցնելով, սահմանափակվում է անձի՝ այլ տեղանք մեկնելու, բնակության վայրը փոխելու, ՀՀ պետական սահմանը հատելու, այն է՝ ազատ տեղաշարժվելու իրավունքը: Միաժամանակ, նախաքննության մարմնի կողմից մեղադրյալի անձնագիրը վերցնելով՝ սահմանափակվում է նաև անձի մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Ուստի, նշված խափանման միջոցի կիրառումը բոլոր դեպքերում է ենթադրում միջամտություն անձի հիմնական իրավունքներին և ազատություններին, և այդ միջամտությունը չի սահմանափակվում այն դեպքերով, երբ անձն ունի իրական շահագրգռվածություն լքելու իր մշտական բնակության վայրը կամ իրականում ձգտում է հեռանալ, սակայն վարույթն իրականացնող մարմնից չի ստանում թույլտվություն:

Այս առումով, հատկանշական են Եվրոպական դատարանի վերը վկայակոչված իրավական դիրքորոշումները, ըստ որոնց՝ անձը պետք է հնարավորություն ունենա իր ազատ տեղաշարժվելու և այլ հիմնական իրավունքների սահմանափակման իրավաչափությունը վիճարկել դատական կարգով՝ անկախ, անաչառ և օրինական երաշխիքների ապահովմամբ:

Կարծում ենք՝ այս մոտեցումը բխում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հետագա դատական վերահսկողության խնդիրներից, որի անմիջական նպատակներից է արձանագրել անձի իրավունքների և ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակումները գործի մինչդատական վարույթում, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները:

Հատկանշական է, որ *Քրեական դատավարության նոր օրենսգրքի* 299-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են դատական բողոքարկման ենթակա մինչդատական ակտերը, որոնց թվում է նաև խափանման միջոց կիրառելու մասին որոշումը: Միաժամանակ *Քրեական դատավարության նոր օրենսգրքի* 115-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով բացակայելու արգելքը նախատեսված է որպես խափանման միջոց:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա պետք է դառնա ոչ միայն այն դեպքում, երբ մեղադրյալն ունի իրական շահագրգռվածություն լքելու իր մշտական բնակության վայրը և համապատասխան թույլտվություն չի ստանում վարույթն իրականացնող մարմնից, այլև այն դեպքերում, երբ անձը բողոքարկում է իր նկատմամբ կիրառված «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի իրավաչափության հարցը՝ անկախ երկիրը լքելու իրական շահագրգռվածության առկայության փաստից:

Հետագա դատական վերահսկողության անմիջական նպատակներից է բացառել անձի իրավունքների և ազատությունների ոչ իրավաչափ սահմանափակումները գործի մինչդատական վարույթում: Ուստի հաշվի առնելով խափանման միջոցի կիրառմամբ անձի հիմնական իրավունքների սահմանափակման փաստը՝ անձը պետք է հնարավորություն ունենա բողոքարկելու իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի իրավաչափությունը՝ դատական բողոքարկման շրջանակում քննարկման առարկա դարձնելով կիրառված միջոցի և իրավունքների սահմանափակման նպատակի

համաչափությունը, ինչպես նաև խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայությունը և խափանման միջոցի այլ տեսակի կիրառման հնարավորությունը: Այս առումով հատկանշական է, որ Պաշտպանին հասցեագրված որոշ դիմումներով անձինք նշել են, որ նախընտրելի է, որ իրենց նկատմամբ կիրառվի «գրավ» խափանման միջոցը, որն ըստ եռթյան ավելի լուրջ միջամտություն է ենթադրում հիմնական իրավունքներին, քան «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցը: Ավելին, վիճարկվող քրեադատավարական օրենսդրությունը կառուցված էր այն տրամաբանությամբ, որ ենթադրում էր նաև անձի նկատմամբ որևէ խափանման միջոցի չկիրառման հնարավորություն:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ «ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառմամբ ինքնին չի սահմանափակվում անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը և նշված խափանման միջոցը չի դիտարկվում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության անմիջական առարկա, չի բխում եվրոպական դատարանի վերը նշված որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումներից և խնդրահարույց է ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված անձի մի շարք հիմնարար իրավունքների երաշխավորման ու պաշտպանության տեսանկյունից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ